Մուժումբար [1] գիւղի եկեղեցւոյն ձեռագիր աւետարաններէ միոյն վերջն «Փառք . . . .» կը շարունակուի 2 էջ. ապա» . . . ծնողացն հաւրն Պապա-ղուլի . . . . (եղծուած) և մաւրն Գավալա եղբարցն Էւատիեար . . . և որդւոցն Եար-Ղուլի. Էւատ. Ումիտիեար.

Աւրինակ մի եղջերուի յիշէ զհօգւոր և Աստուածասէր Այլահ·ղուլի որ խնլովութէն . . . բաղձայ աղբեր ջուրց ըստ բանի երջանեկին Դաւթիւ, Ապօխս ի մարգ ճշմարիտ և ի գառն Աստուծոյ Զոր պատէս աւետաբար բուռն Մատթէոս . . . .» (կը շարունակուի 3 էջ)

« Արդ անկեալ կորցւ. Ս. աւետարանս և բերան Քրիստոսի Տեառն . . . ի գեղս որ կոչի Եղինգն ի յաթոռս Թադէի Ս. առաքելոց ի հայրապետութիւն Ըստեփան եպիսկոպոսին Ցոյան եպիսկոպոսի ի թվկն. հայոց ՌԺԹ.»

« Եւ ես Թափուր . . . Զաքարիա սուտանուն երեց . . . կատարեցի Ս. աւետարանս մեղսամած մատամբ . . . (կը շարունակուի 10 տող) և զիս կծաւղս Զաքարայ և ծնողաց իմոց հաւրն իմ Սուլթան-ղուլ . . .»

« Զկազմող Ս. աւետարանիս զանարժան Մելքիսէթ աղաչեմ . . . (5 տող) ի թվականին ՌՃԶ և մարտ Է. ին

« Ձեռամբ Միքլին սրբագրեցաւ և կազմեցաւ». Ես Ալաղուլիս ստացայ . . . կողակիցն իմոյ Նուր Մալաքին.»

Այլ աւետարանի մէջ «ի յիշատակ . . . Նենցի Աբրահամի որդի Ապկարին . . . . Ես Դաւիթ վրդպտէ. Ածոյղի Ս. Նշանի առաջնորդի առի իշխանութիւն Աստապատցի Պետրուն վրդպտէ. թվ ՌՃ. հա ին աղա Թոշմալն տանուտէր Կարապետն Խանխուտէն Անդանէ մըր երէց . . . Դունուց Ս. աւետարան.»

Այլ աւետարանի մի յիշատակարանն՝

« Արդ եղև զտու գրչութեան այսմ Ած.աշունչ Ս. աւետարանիս ի թուականութեանն հայկազնեան տումարի ՋԼԳ. ի դառն և ի դժնեայ յանբարի և ի վշտաշատ ժամանակի յո-

---

1. Մուժամբար Դավրէժից 4 $^{1}/_{2}$ ժամ հիւսիս լեռներու մէջ մի հայ գիւղ է, որոյ բարձրն Նրեւման խաչ մատուռի մէջ կար 2 ձեռագիր աւետարան քայքայուած վիճակի մէջ եւ անխնամ մնացած որպէս գիւղի եկեղեցւոյն մէջ զտնուած գրեանք: